ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1487

13.11.2014թվ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
մուտք № 4633
17 11 2014

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
մուտք թիվ 8819
17 11 2014 թ.

Հարգելի պարոն Գասպարյան.

29.09.2014թ-ին թիվ 2621/1469 գրությամբ Դիտորդական խումբը ներկայացրել էր ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Գորիսի ՁՊՎ-ում Դիտորդական խմբի կողմից արձանագրված թերությունները և խախտումները, որին ի պատասխան մեկնաբանություն էր տրվել ՀՀ ոստիկանությունից 08.11.2014թ-ին թիվ 2/2-1-2881 գրությամբ: Տվյալ մեկնաբանության որոշ կետերի հետ Դիտորդական խումբը համաձայն չէ և ներկայացնում է իր պարզաբանումը:

Ինչ վերաբերվում է 2-րդ կետի այն մեկնաբանությանը, որ ՁՊՎ-ի բուժսենյակի դռան վրա արտաքին կողմից փակցված է <<բուժսենյակ>> գրառումը, ներսում առկա է մահճակալ՝ բժշկական սավանով, պատին ամրացված է դեղարկղ սահմանված դեղատեսակներով, սեղան և աթոռ, ինչը լիովին համապատասխան է ընդունված չափանիշներին>>, նշենք, որ տվյալ բուժսենյակը մնացած խցերից տարբերվում էր միայն Ձեր կողմից նշված դռան վրայի արտաքին գրառումով և դեղարկղով: Իսկ ինչ վերաբերվում է այն փաստին, որ մահճակալին եղել է բժշկական սավան՝ իրականությանը չի համապատասխանում և դրանում կարելի է համոզվել կրկին անգամ Դիտորդական խմբի կողմից ներկայացրած լուսանկարը ուսումնասիրելով: Ավելին՝կից ներկայացնում ենք նախորդ անգամ ներկայացրած լուսանկարը և տվյալ բուժսենյակի լվացարանի հակահիգիենիկ վիճակը, ինչպես նաև նույն վիճակում էր գտնվում բոլոր խցերի լվացարանները -1,2,3,4 և միաժամանակ խնդրում ենք ուշադրություն դարձնել, տվյալ բուժսենյակում տեղադրված աթոռ - սեղանի օգտագործման ձևին, որը կահավորված է ինչպես մնացած խցերում:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Ինչ վերաբերվում է վերջին պարբերության տրված մեկնաբանությանը՝ ՀՊՎ-ի վարչակազմի կողմից Դիտորդական խմբի աշխատանքները խոչընդոտելուն, ապա հայտնվում է, որ Դիտորդական խմբին տրամադրվել է ՀՊՎ-ի գործունեության վերաբերվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև կալանավորված անձին ՀՊՎ ընդունելու վերաբերյալ դատարանի կողմից տրված որոշման պատճեն: Հիշյալ փաստաթղթերի տրամադրումը բարի կամքի դրսևորման արդյունք է, քանի որ ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ-ի 1-Ն հրամանի առանց ՀՊՎ-ում պահվող անձի համաձայնությամբ անձնական գործ Դիտորդական խմբին չի տրամադրվում, հետևաբար ձերբակալված Ա. Ասլանյանի քննչական գործողությունների նպատակով ՀՊՎ-ի տարածքից դուրս տեղափոխելու վերաբերյալ քննիչի կողմից տրված հայտը չտրամադրելը դիտել որպես խմբի գործունեությունը խոչընդոտելու փաստ, իրավաչափ չէ: Ազատ արձակվածների, այդ թվում նաև Ա. Ասլանյանի անձնական գործը գտնվել է բաժնի հերթապահ մասի պետի չհրկիզվող պահարանում: Դիտորդական խմբի այցելության օրը հերթապահ մասի պետը գտնվել է գործուղման մեջ և վարչակազմը չհրկիզվող պահանի բանալին չունենալու պատճառով, նշված հայտը չի տրամադրել Դիտորդական խմբին:

Պարզաբանում՝

1. Եթե օրենսդրությամբ արգելված է համապատասխան փաստաթղթերի տրամադրումը, ապա Դիտորդական խումբը չի ընդունում և չի հասկանում <<բարի կամքի դրսևորում>> ասած բառակապակցությունը:
2. Ա. Ասլանյանի քննչական գործողությունների նպատակով ՀՊՎ-ի տարածքից դուրս տեղափոխելու վերաբերյալ քննիչի կողմից տրված հայտը հիմք է հանդիսանում տվյալ անձին ՀՊՎ-ից դուրս բերելու օրինականության փաստը հաստատելու և դա անձնական գործում չէր կարող գտնվել, քանի որ դա ՀՊՎ-ի գրագրություն է:
3. Եվս մեկ անգամ փաստում ենք, որ տվյալ գործողություններով խոչընդոտել են Դիտորդական խմբի աշխատանքները, որովհետև Ձեր կողմից նշված չհրկիզվող պահարանի բանալին արդեն իսկ բերվել և բացվել էր, և որոշ փաստաթղթեր տրամադրվել էր Դիտորդկան խմբին: Բաժնի հերթապահ մասի պետի հեռախոսազանգով տրված հանձնարարականից հետո, ՀՊՎ-ի հերթապահ ոստիկանը հրաժարվեց տրամադրել որևէ այլ փաստաթուղթ:
4. Դիտորդական խումբը կարծում է, որ եթե հերթապահ մասի պետը գտնվել է գործուղման մեջ, ապա նրան պետք է փոխարինող լիներ և անհարժեշտ հիմքերը պետք է տրամադրվեր Դիտորդական խմբին՝ ուսումնասիրության համար:

Այսպիսով՝ խնդրում ենք ևս մեկ անգամ ուսումնասիրել ներկայացված փաստերը և չփորձել հերքել կամ աղավաղել Դիտորդական խմբի կողմից նրեկայացված որևէ փաստ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3068 <<25>> 11 2014թ.

Ձեր 13.11.2014թ. թիվ 2621/1487 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի ՁՊՎ-ի բուժսենյակի մահճակալի ներքնակը դիտորդների խմբի 2014թ. սեպտեմբեր ամսին կատարած այցելությունից անմիջապես հետո ծածկվել է բժշկական սավանով: ՀՀ ոստիկանության 08.11.2014թ. թիվ 2/2-1-2881 գրությունում նշվել է. <<առկա է մահճակալ՝ բժշկական սավանով>>, նկատի ունենալով, որ նշված բացթողումը վերացված է: Ինչ վերաբերվում է բուժսենյակի աթոռի և սեղանի դասավորվածությանը, ապա այն որևէ իրավական ակտով սահմանված չէ և տվյալ դեպքում դրանց դասավորվածությունը բուժզննության կամ բուժօգնության իրականացման գործընթացին չի խոչընդոտում: Բուժսենյակի և խցերի լվացարանների առումով ՁՊՎ վարչակազմին հանձնարարվել է պարբերաբար մաքրել լվացարանները և դրանք մշտապես պահել մաքուր վիճակում:

Գրությունում նշված մյուս բոլոր հարցերին արդեն իսկ վերը նշված գրությամբ ՀՀ ոստիկանության կողմից տրվել են հիմնավոր և սպառիչ պատասխաններ:

Հայտնվում է նաև, որ ՀՀ ոստիկանությունը ամենևին էլ միտում չունի հերքելու կամ աղավաղելու դիտորդների խմբի կողմից ներկայացված որևէ իրական փաստ, քանի որ դիտորդների խմբի կողմից ՀՀ ոստիկանության համակարգի գործող ՁՊՎ-ներ կատարած այցելությունների ընթացքում արձանագրված թերությունների և խախտումների վերաբերյալ ներկայացված հաշվետվություններին ՀՀ ոստիկանության մեկնաբանությունները տրվում են ՁՊՎ-ներում կատարված ստուգումների, անցկացված ծառայողական քննությունների, ինչպես նաև կոնկրետ փաստերը հաստատող փաստաթղթերի առկայության հիման վրա: Ավելին, Ձեր կողմից ներկայացված խախտումները հիմնավորվելիս իրենց գործառութային պարտականությունների մեջ թերացած ծառայողները նախազգուշացվում կամ ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

Հարկ է նշել, որ ոստիկանությունը բարձր է գնահատում դիտորդների խմբի գործունեությունը, ինչի արդյունքում ի հայտ են բերվում ՁՊՎ-ներում տեղ գտած մի շարք թերություններ ու խախտումներ, սակայն այդ ամենի հետ մեկտեղ ՀՀ ոստիկանությունը հորդորում ու պահանջում է դիտորդների խմբից՝ հաշվետվություններ ներկայացնելիս ՀՀ ոստիկանությանը ուղղություններ ցույց չտալ մեկնաբանություններ տրամադրելու հարցում:

ՀՀ ոստիկանության շտաբ